ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Ընթերցողների ուշադրությանը ներկայացվող հետազոտությունների այս ժողովածուն «Հայ էսթետիկական մտքի պատմությունից» մատենաշարի երկրորդ գիրքն է: Այստեղ զետեղված են XIX դարի վերջի և XX դարի սկզբի հայ էսթետիկական մտքի տարբեր ներկայացուցիչների հայացքների վերլուծությանը նվիրված ուսումնասիրություններ:

Ժողովածուի նյութերը ներկայացնում են հայ էսթետիկական մտքի այդ շրջանի մինչև այժմ քիչ հայտնի, երբեմն էլ բոլորովին չուսումնասիրված դեմքեր և փաստեր:

Այսպես, եղիա Տեմիրճիպաշյանը արևմտահայ այն գործիչներից է, որի հարուստ և բազմակողմանի գրական ժառանգությունն իր ամբողջության մեջ դեռևս քիչ է ուսումնասիրված: Լայն ընթերցողին անհայտ է առավելապես նրա էսթետիկական հավատամքը: Այդ իմաստով Տեմիրճիպաշյանի էսթետիկական հարցադրումների լուսաբանումը հնարավորություն է տալիս լրացնել հայ էսթետիկական մտքի պատմության ևս մի էջ, մյուս կողմից՝ նոր լույս է սփռում այդ շատ հետաքրքիր և միաժամանակ բարդ հեղինակի ամբողջ ստեղծագործության վրա:

Վրթանես Փափազյանի էսթետիկական հայացքների մենագրական բնույթի ուսումնասիրությունը՝ հայ դեմոկրատ գրողի էսթետիկական ըմբռնումների ու հարցադրումների վերլուծության առաջին լուրջ փորձն է: Հեղինակը նյութը շարադրում է դարաշրջանի էսթետիկական հայացքների լայն ֆոնի վրա՝ մի բան, որ հնարավորություն է ընձեռում ոչ միայն բնութագրել Վ. Փափազյանի ուսումնասիրվող հայացքները, այլև որոշել նրա տեղն ու նշանակությունը այդ շրջանի հայ էսթետիկական մտքի պատմության մեջ:

«Մուրճ» ամսագրի էջերում ռեալիզմի էսթետիկայի հարցերի

արտացոլման ուսումնասիրությունը նույնպես առաջին անգամ է դառնում քննարկման առարկա, թեև «Մուրճ» ամսագիրը տարբեր առումներով հետազոտվել է:

«XIX դարի վերջի և XX դարի սկզբի հայ նկարիչները էսթետիկայի հարցերի մասին» հոդվածը նշված ժամանակաշրջանի հայ արվեստի ներկայացուցիչների էսթետիկական հայացքների բնութագրմանը նվիրված հոդվածաշարից երկրորդն է (առաջին հոդվածը՝ «XIX դարի վերջի և XX դարի սկզբի հայ կոմպոզիտորների էսթետիկական հայացքները», զետեղված է «Հայ էսթետիկական մտքի պատմությունից» ժողովածուի 1-ին գրքում, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1974): Հոդվածում փորձ է արվում ընդհանուր գծերով լուսաբանել այն ժամանակի հայ նկարիչների տեսական հարցադրումները, որոնք դուրս գալով լոկ արվեստագիտության շրջանակներից, ստանում էին ավելի լայն՝ էսթետիկական նշանակություն:

Հաջորդ հոդվածը՝ «Ճշմարիտը և գեղեցիկը Տիրան Զրաֆյանի էսթետիկայում» ընթերցողներին ներկայացնում է մինչև այժմ սակավ ուսումնասիրված՝ ինքնատիպ հեղինակ Տիրան Զրաֆյանի էսթետիկական հարցադրումները: Ի դեպ, նա հայ իրականության մեջ իմպրեսիոնիստական էսթետիկայի ներկայացուցիչներից մեկն է:

Ժողովածուում հետազոտվող ժամանակաշրջանը՝ հանուն ռեալիզմի հաղթանակի մղվող սուր պայքարի շրջան էր և այս գրքի նյութերը որոշակի պատկերացում են տալիս այդ պայքարի մասին:

ՑԱ. Ի. ԽԱՉԻԿՅԱՆ